

Հաշվետվություն

2023 թվականի դեկտեմբերի 3-8-ը Իսպանիայի Թագավորություն,
(Վալենսիա) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Մարինե Սահակյան, Կադաստրի կոմիտեի արտաքին կապերի վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Իսպանիայի Թագավորություն, Վալենսիա, 2023 թվականի դեկտեմբերի 3-8-ը

3. Հրավիրող կողմը.

Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարան

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն «Գեոթակ (GeoTAK)» ծրագրի շրջանակներում անցկացված վերապատրաստման դասընթացներին և համակարգման հանդիպումներին

5. Քննարկված թեմաները.

Նիստի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները.

- Համատեղ ասպիրանտական ծրագրի շնորհանդեսը GIT ոլորտում,
- Հողային քաղաքականություն և հողի վերաբաշխում,
- Անօդաչու թռչող սարքերի կիրառում,
- Հայաստանում բարձրագույն կրթության որակի ապահովման քաղաքականություն,
- Հետազոտական հաղորդակցություն և էթիկա,
- Ուսումնական նյութերի կազմում, փորձի փոխանակում,
- Արտաքին գնահատում և հաշվետվության ներկայացում,
- Եզրափակիչ միջոցառման նախապատրաստում,
- Համաձայնագրերի մշակում՝ արդյունաբերական ասպիրանտուրա, մշակված ուսումնական ծրագրեր,
- Կառավարման խորհրդի նիստ:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Ծրագրի առանցքային նպատակն է նպաստել Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում հետբուհական բարձրագույն կրթության ծրագրերի զարգացմանը, ինչպես նաև Հայաստանի և Ղրղզստանի բարձրագույն ուսումնական

հաստատությունների (բուհերի), արդյունաբերության և վարչարարական համակարգերի միջև հետազոտական և նորարարական կապերի ամրապնդմանը: Վերապատրաստման ընթացքում ծրագրում ներառված բուհերի ներկայացուցիչները ներկայացրել են ուսումնական հաստատություններում ասպիրանտական ծրագրերի դասավանդման ձևաչափերը: Ծրագրի շնորհիվ բուհերը ստեղծել են լաբորատորիաներ, որոնք հագեցած են ժամանակակից սարքավորումներով: Ներկայացվեցին անօդաչու թռչող սարքերի տեսակները, դրանց կիրառման ձևերը և ոլորտները:

Աշխատաժողովի շրջանակում կայացել է կառավարման խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվել են մի շարք տեխնիկական և ֆինանսական հարցեր: Ծրագիրը ավարտական փուլում է, որի եզրափակիչ հանդիպումը տեղի է ունենալու 2024 թվականի հունվարի 9-12-ը Երևանում: Նշված միջոցառման շրջանակներում Հայաստանում են գտնվելու ծրագրի շահառու բուհերի ներկայացուցիչները, անցկացվելու են աշխատաժողովներ, քննարկումներ, մասնագիտական հանդիպումներ:

Քննարկվել են Երևանում անցկացվելիք միջոցառման հետ կապված կազմակերպչական և բովանդակային հարցերը: Կադաստրի կոմիտեն՝ որպես խորհրդատվական մարմին, իր պատրաստակամությունն է հայտնել աջակցել ծրագրի մասնակիցներին կազմակերպչական հարցերում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակելու համագործակցությունը շահառու բուհերի ներկայացուցիչների հետ՝ կարևորելով փորձի փոխանակման գործոնը: Առանցքային ենք համարում բուհ-պետական մարմին համագործակցությունը՝ մասնագետների վերապատրաստման և կադրային համալրում իրականացնելու տեսանկյունից:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ կմշակվի համագործակցության հուշագիր Կադաստրի կոմիտեի և բուհերի միջև՝ Կոմիտեի գործառույթներից բխող աշխատանքներում արդյունաբերական ասպիրանտուրայի ուսանողներին ներգրավվելու համար:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մարինե Սահակյան



12.12.2023 թ.